Եվրոպական հարևանության և գործընկերության գործիք

«ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԲԱՀՄԱԿՈՂՄԱՆԻ ԽԹԱՆՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Իրականացնող՝ Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա

Գործընկեր՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոն

Սույն հրատարակումն իրականացվել է Եվրոպական միության աջակցությամբ: Հրատարակման բովանդակության համար պատասխանատու է միայն Հայաստանի Երիտասարդ իրավաբանների ասոցիացիա հասարակական կազմակերպությունը և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության պաշտոնական տեսակետները:

«ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻ ԽԹԱՆՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

Եվրամիության կողմից ֆինանսավորվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագիրն (այսուհետ տեքստում՝ Ծրագիր) իրականացվում է «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ի կողմից՝ գործընկեր՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի հետ համագործակցությամբ: Ծրագրի իրականացումը սկսվել է 2014 թվականի հունվարից և կավարտվի 2016 թվականի դեկտեմբերին:

Ծրագրի հիմնական նպատակն է մեծացնել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (այսուհետ տեքստում՝ ՔՀԿ) դերը հակակոռուպցիոն բարեփոխումների խթանման և իրականացման գործում: Ծրագրային գործողությունները իրականացվում են հետևյալ 3 բաղադրիչներով.

1. Հզորացնել ՔՀԿ-ների մոնիթորինգի և վերահսկողության կարողությունները.

- *Ծրագրի այս բաղադրիչի իրագործման ուղղությամբ կազմակերպվելու են հակակոռուպցիոն ուսուցումներ ՀՀ մարզերում և հանրապետության տարածքներում՝ ՔՀԿ-ների և ՁԼՄ-ների համար:*

Նախատեսվում է կազմակերպել թվով 10 հակակոռուպցիոն ուսուցումներ՝ Երևանում, Գյումրիում, Վանաձորում, Գավառում, Արարատում և Կապանում՝ հանրապետական և մարզային ՔՀԿ-ների և ՁԼՄ-ների համար: Ուսուցումները կանցկացվեն ազգային և միջազգային փորձագետների մասնակցությամբ:

- *Հակակոռուպցիոն ուսուցում անցած ՔՀԿ-ներին և ՁԼՄ-ներին փոքր դրամաշնորհների տրամադրում՝ մոնիթորինգի, վերահսկողության և լրագրողական հետաքննական ծրագրերի իրականացման համար:*

Ծրագրի շրջանակներում փոքր ենթադրամաշնորհներ կտրամադրվեն մինչև 20 ՔՀԿ-ների՝ ծրագրի նպատակներին համապատասխան հակակոռուպցիոն մոնիթորինգների, վերահսկողության և լրագրողական հետաքննությունների իրականացման համար:

2. Բարձրացնել ՔՀԿ-ների կողմից ՀՀ կառավարության հնգամյա ծրագրով նախատեսված հակակոռուպցիոն բարեփոխումների և 2012-2016 թվականների դատահիրավական համակարգի բարեփոխումների ռազմավարության նկատմամբ հանրային վերահսկողության արդյունավետությունը.

Ծրագրի այս՝ երկրորդ բացադրիչի ուղղությամբ նախատեսվում է ստեղծել ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիա և իրականացնել կառավարության հնգամյա ծրագրով նախատեսված հակակոռուպցիոն բարեփոխումների և 2012-2016 թվականների դատահիրավական համակարգի բարեփոխումների ռազմավարության իրավական ասպեկտների մոնիթորինգի իրականացում՝ հետևյալ միջոցներով.

- ՔՀԿ-ներին և ՁԼՄ-ներին կտրամադրվեն փոքր ենթադրամաշնորհներ՝ համապատասխան մոնիթորինգային, վերահսկողական և լրագրողական հետաքննական ծրագրերի իրականացման համար.
- Իրավաբան.net կայքի միջոցով ամենօրյա ռեժիմով կհանրայնացվի մոնիթորինգի, վերլուծության, լրագրողական հետաքննությունների կատարման և այդ աշխատանքների ընթացքում հայտնաբերված կոռուպցիոն ռիսկերն ու խնդիրները.
- Երևանում և ՀՀ մարզերում պարբերաբար կկազմակերպվեն հակակոռուպցիոն միջոցառումներ, ինչպիսիք հնարավորություն կընձեռեն վեր հանել առկա խնդիրները, հաղորդակից դարձնել կոալիցիայի կողմից իրականացվող աշխատանքներին, տեղեկացնել կառավարության հնգամյա ծրագրով նախատեսված հակակոռուպցիոն բարեփոխումների և դատահիրավական համակարգի բարեփոխումների բնագավառի ժամանակացույցից շեղվելու և հետաձգելու փաստերը, ինչպես նաև արձանագրած այլ խնդիրներ:
- Կկազմակերպվեն նաև Կառավարություն-ՔՀԿ-ներ երկխոսությանը նվիրված համաժողովներ:

3. Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մեխանիզմները ամրապնդելու համար ստեղծել ՔՀԿ-Կառավարություն կայուն երկխոսություն ՔՀԿ-ների մասնակցությամբ անկախ միասնական հակակոռուպցիոն մարմնի ստեղծման և ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի 20-րդ հոդվածի (Ապօրինի հարստացում) քրեականացման հարցերի վերաբերյալ.

1. **Հակակոռուպցիոն անկախ մարմնի** ստեղծումն (այսուհետ տեքստում՝ Հակակոռուպցիոն մարմին) ուղղված է Հայաստանում կոռուպցիայի ծավալների կրճատմանը, կոռուպցիայի դեմ պայքարի քաղաքականության և հակակոռուպցիոն ծրագրերի մշակմանը և իրականացմանը, կոռուպցիայի կանխարգելմանը, հակակոռուպցիոն քարոզչությանն ու հասարակության լայն շերտերի մասնակցությամբ հակակոռուպցիոն ուսուցումների կազմակերպմանը: Հակակոռուպցիոն մարմնում համաչափության սկզբունքով պետք է տեղ գտնեն նաև ՔՀԿ ներկայացուցիչները: Ընդ որում, հակակոռուպցիոն մարմնի լիազորությունները պետք է բխեն ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի 13-րդ հոդվածի պահանջներից և պետք է իրականացնի.

ա) սույն Կոնվենցիայի 5-րդ հոդվածում նշված քաղաքականության իրականացումը և, համապատասխան դեպքերում, այդպիսի քաղաքականության իրականացման հսկողությունը և համակարգումը.

բ) կոռուպցիայի կանխարգելման հարցերով գիտելիքներն ընդլայնելը և տարածելը:

2. ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի 20-րդ հոդվածի **(Ապօրինի հարստանալը)** համաձայն՝ «Իր սահմանադրությունը և իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքները պահպանելու պայմանով՝ յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է քննարկի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ ձեռնարկելու հնարավորությունը, որոնք կարող են անհրաժեշտ լինել, որ որպես քրեական իրավախախտում ճանաչվի անօրինական հարստացման արարքը, երբ դա կատարվում է

դիտավորությամբ, այսինքն՝ պաշտոնատար անձի ակտիվների նշանակալից ավելացումը, որը գերազանցում է նրա օրինական եկամուտները, և որը նա չի կարող խելամտորեն հիմնավորել»: «ՀՀ քրեական օրենսգիրք» ՀՕ-528 օրենքն ընդունվել է 2003 թվականի ապրիլի 18-ին, ուժի մեջ է մտել 2003 թվականի օգոստոսի 1-ից, և «ապօրինի հարստացումը» որպես քրեորեն պատժելի արարք, չի նախատեսվել: Հիմք ընդունելով միջազգային պայմանագրերի նորմերը՝ անհրաժեշտ է քրեական օրենսգրքում կատարել փոփոխություն և ապօրինի հարստացումը քրեականացնել:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ստեղծել Կառավարություն-ՔՀԿ-ներ միասնական աշխատանքային խումբ՝ վերը նշված երկու հարցերի վերաբերյալ կառավարության և ՔՀԿ-ների մոտեցումները մերձեցնելու ու հայեցակարգեր մշակելու համար:

Ծրագրի իրականացման ավարտին կկազմակերպվի ծրագրի ավարտական շնորհանդես/սեմինար, որտեղ Ծրագրի ներկայացուցիչները կներկայացվեն Ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքներն ու նվաճած արդյունքները:

ԻՆՉՊԵ՞Ս ԴԻՄԵԼ «ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻ ԽԹԱՆՈՒՄ» ԾՐԱԳՐԻՆ

Եթե Դուք ունեք հարցեր «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրով իրականացվող գործողությունների վերաբերյալ, ցանկություն ունեք մասնակից լինելու դրանց իրագործմանը, հայտեր ներկայացնելու հայտարարված մրցույթներին և ուսուցումներին, կամ ունեք առաջարկներ հակակոռուպցիոն բնույթի բարեփոխումների իրականացման ուղղությամբ, երկուշաբթիից-ուրբաթ օրերին՝ ժամը 09.00-13.00 և 14.00-18.00 ընկած ժամանակահատվածում կարող եք դիմել Ծրագիրն իրականացնող և Ծրագրի գործընկեր կազմակերպություններին.

Ծրագիրը ֆինանսավորվում է ԵՄ-ի կողմից: Բյուջեն կազմում է 650.000 եվրո: Ծրագրի տևողությունն է 3 տարի՝ 2014թ. հունվարից մինչև 2016թ. դեկտեմբեր:

«Էմ Իքս Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ
ընկերություն
1000 օրինակ

«ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԲԱՁՄԱԿՈՂՄԱՆԻ ԽԹԱՆՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

Ծրագրի իրականացնող՝

«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպություն՝ ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի կոալիցիայի անդամ

ք. Երևան, Նալբանդյան 7, գրասենյակ 2, 0010

Հեռախոս՝ +37410 54 01 99

Հեռապատճե՝ +37410 58 02 99

Էլ. Փոստ՝ ayla@ayla.am

Վեբ կայք՝ www.ayla.am, www.iravaban.net

Ծրագրի գործընկեր՝

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպություն՝ Տեղեկատվության ազատության պաշտպանների միջազգային ցանցի հիմնադիր անդամ

ՀՀ, ք. Երևան, Փ. Բյուզանդի 1/3, 4-րդ հարկ, 0010

Հեռախոս՝ +37410 56 03 60

Էլ. փոստ՝ foi@foi.am

Վեբ կայք՝ www.foi.am